

ԱՆԽԱԽՏ Է ՊԱՐՏԻԱՅԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

★ ★

★ ★ ★

★ ★

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԶՈՐՈՒՅՐԱՆ

Այս օրերին Ալավերդու շրջանի արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններում ու հիմնարկներում տեղի են ունենում պարտիական կազմակերպությունների, աշխատավորների ժողովներ, որտեղ ջրհեղեղներ են ծագում և ՍՍՀՄ Կենտրոնական Կոմիտեի Պլենումի արդյունքները, Ամենուրեք կոմունիստներն ու անպարտիականները խորին զայրույթով նշագրում են դավաճան Բերիայի հակապարտիական ու հակապետական հանցավոր գործողությունները և միահամուռ հավանություն տալիս Կենտրոնական Կոմիտեի որոշմանը:

Պարտիայի շրջանային կոմիտեի ակտիվի հետ համատեղ հրավիրված պլենումը վերածվեց հարազատ նույնիստական պարտիայի, նրա լինելու անտախտության Կենտրոնական Կոմիտեի շուրջը շրջանի կոմունիստների սերտ համախմբվածության հզոր ցույցի:

Հանդես գալով պղծածուրպիական կոմբինատի կոլեկտիվի բազմամարդ ժողովում, ձուլման ցեխի պետի տեղակալ, ՍՍՀՄ Գերագույն Սովետի ղեկավար Բ. Պապոյանն ասաց.

— Թշնամիները մեկ անգամ չէ, որ փորձել են թուլացնել մեր Հայրենիքի հզորությունը, բայց միշտ էլ, հանդիպելով պարտիայի ու ժողովրդի կուռ միասնությանը, հողազրկվ են եղել:

— Կոմունիստական պարտիայի ղեկավարությանը,— իր ելույթում ասաց հերթափոխության պետ ընկ. Մ. Հայրապետյանը,— սովետական ժողովուրդը ձեռք է բերել համաշխարհային պատմական նշանակություն ունեցող նվաճումներ: Այդ նվաճումները գազազեցնում են մեր թշնամիներին: Նրանք ցանկանում են կասեցնել մեր խաղաղ, ստեղծարար աշխատանքը: Այդ է վկայում դավաճան Բերիայի թշնամական գործունեությունը: Սակայն նրա հրեշտակը հաշիվները ձախողվեցին: Հակառակ թշնամիների ցանկության, մենք էլ ավելի կամրասնդենք մեր մեծ Հայրենիքի հզորությունը:

Բազմամարդ ժողովներ տեղի ունեցան նաև Շամլուղի հանրություն, քիմիական գործարանում, Սանահին կայարանում, շրջանի կոլտնտեսություններում ու հիմնարկներում:

Միաձայն քննարկված բանաձևերում աշխատավորները հավաստիացրին պարտիայի Կենտրոնի, որ այսուհետև ավելի ակտիվորեն կաշխատեն նոր հնգամյա պլանի իրականացման համար, կլինեն զգուն, աչքի լույսի պես կպահպանեն ՍՍՀՄ ժողովուրդների մեծ բարեկամությունը:

ՍԱ՛՛՛ ԴԱՎԱՃԱՆ ԲԵՐԻԱՅԻՆ

Ժողովրդի ոխերիմ թշնամի, միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիայի հակապարտիական-հակապետական հանցավոր գործողությունները անսահման զայրույթ են առաջացրել Աղիզբեկովի շրջանի աշխատավորների մեջ: Նրանք անարգանքի սյունին են դամում բուրժուական վերասերված Բերիային և խորին շնորհակալություն հայտնում պարտիայի Կենտրոնական Կոմիտեին դարանակալ թշնամուն ժամանակին մերկացնելու համար: Նրանք աշխատավորների այդ խոհեղը լավ արտահայտեց կոլտնտեսական Ս. Հյուսեյնովը: Հանդես գալով Հերհեր գյուղի աշխատավորների ժողովում, նա ասաց.

— Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը կործանումից փրկեցին աղբյուրանական, հայ և մեր մեծ Միության մյուս ժողովուրդներին, նրանց տվեցին ազատության ու ազգային վերածննդի հնարավորություն, ստեղծեցին մեզ համար երջանիկ կյանք: Դավաճան Բերիան ցանկանում էր ատելություն սերմանել ՍՍՀՄ ժողովուրդների միջև, խարխուլ մեր երջանկության աղբյուր կոլտնտեսային կարգերը: Սակայն նրա նենգ դիտավորությունները մերկացվեցին: Մահ դավաճան Բերիային:

Այնուհետև մեկը մյուսի հետևից ելույթ ունեցան գյուղական Սովետի ղործկոմի նախագահ Ա. Ամրահովը, կոլտնտեսության պարտիական կազմակերպության բյուրոյի քարտուղար Պ. Թովմասյանը և ուրիշներ, որոնք իրենց երախտագիտությունը հայտնեցին պարտիայի Կենտրոնական Կոմիտեին ժամանակին և վճռական միջոցառումներով ստոր Բերիայի հանցավոր գործողությունները լիկվիդացնելու համար: Ի պատասխան պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Պլենումի որոշման, կոլտնտեսականները պարտավորվում են ավելի ակտիվորեն մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, ժամանակին և բարձր որակով անցկացնել խոտհոսնաք, կերի սիլոսացումը, բերքահավաքը, ժամկետից շուտ կատարել պետական պարտավորությունները:

Ձեռնարկություններում ու հիմնարկներում, ՄՏ կայաններում ու կոլտնտեսություններում տեղի ունեցող ժողովները ամենուրեք վերածվում են հարազատ Կոմունիստական պարտիայի, Սովետական կառավարության շուրջը գյուղի աշխատավորների սերտ համախմբվածության հզոր ցույցերի:

ԿՈՆՍԵՐՎԱԳՈՐԾՆԵՐԻ ԶԱՅՐՈՒՅԹԸ

Նրանի կոնսերվի գործարանի աշխատողների բազմամարդ ժողովում ելույթ ունեցող բանվորները, բանվորուհիները, ինժեներներն ու ծառայողները անսահման զայրույթով ու ատելությամբ էին խոսում պարտիայի ու ժողովրդի նենգ թշնամի, իմպերիալիզմի գործակալ Բերիայի շարագործությունների մասին:

Բանվորուհի Ս. Ջանիկյանը իր ելույթում ասաց.

— Մեր երկրի ժողովրդական տնտեսությունը անսխալ ձևով վերելք է ապրում: սովետական ժողովուրդը հաջողությամբ կոմունիզմ է կառուցում: Մեր պարտիայի մոլի թշնամի Բերիան փորձում էր խանգարել մեր առաջընթացը, զավթել իշխանությունը և մեր երկրում վերականգնել կապիտալիզմը: Բայց դա նրան չհաջողվեց: Մեր հարազատ Կոմունիստական պարտիան պատեց մոլի ավանտյուրիստի դիմակը: Մենք վճռաբար պահանջում ենք, որ մարդկության այդ տականքը պատրվի խտրազույն կերպով:

— Միջազգային իմպերիալիզմի ստոր վարձկան, սովետական ժողովրդի երգվալ թշնամի Բերիան փորձում էր բայցայել մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը՝ սոցիալիստական բազմազգ պետության հիմքերի հիմքը, երկպառակություն սեր-

մանել ՍՍՀՄ ժողովուրդների միջև, ակտիվացնել բուրժուա-նացիտալիստական տարրերը Միութենական ռեսպուբլիկաներում: Մենք սրտազին շնորհակալություն ենք հայտնում Կոմունիստական պարտիային, որը ժամանակին մերկացրեց այդ վիժվածքին,— իր ելույթում ասաց ինժեներ Մ. Տիշչենկոն:

Բրիգադիր Վ. Բաղդամյանը հայտարարեց.

— Կոլտնտեսությունները, բայցայելու և երկրի պարենային մատակարարման գործում դժվարություններ ստեղծելու նպատակով ճիվաղ Բերիան զանազան պատրվակներով ամեն կերպ արգելադրում էր գյուղատնտեսության կարևորագույն հարցերի լուծումը: Բայց ոչ ոքի չի հաջողվել և չի հաջողվի քայքայել կոլտնտեսային կարգը:

Ժողովի մասնակիցները միահամուռ կերպով ընդունեցին բանաձևում հավանություն տվեցին ՍՍՀՄ Կենտրոնի և ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության որոշումներին, պարտավորվեցին ավելի սերտորեն համախմբվել կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության շուրջը և իրենց անձնվեր աշխատանքով էլ ավելի ամրապնդել մեր երկրի հզորությունը:

ԿՈՒՌ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՐԲ

Տեղի ունեցավ ՀԿՊ Ստեփանավանի շրջկոմի պլենումը՝ պարտիական ակտիվի հետ համատեղ, նվիրված ՍՍՀՄ Կենտրոնի Պլենումի արդյունքների քննարկմանը: Այդ առթիվ ղեկուցեց պարտիայի քարտուղար ընկ. Վ. Ղազարյանը, որը միաժամանակ ընթերցեց Կենտրոնի Պլենումի որոշումը՝ Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի ոխերիմ թշնամի, միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիայի հրեշտակ գործողությունները մերկացման և լիկվիդացման մասին:

Ձեկուցողը և ելույթ ունեցող ընկերները միահամուռ հավանություն տվեցին պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ձեռնարկած միջոցառումներին, նշեցին դրանց վիթխարի նշանակությունը պարտիայի, կառավարության և ժողովրդի միասնության ու համախմբվածության, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման համար:

Գյուղատնտեսության և մթերումների վարչության պետ ընկ. Բ. Գրիգորյանն իր ելույթում ասաց.

— Սովետական բազմամիլիոն ժողովուրդը չեքմ շնորհակալություն է հայտնում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի նախագահությանը, որը ժամանակին մերկացրեց Հայրենիքի ստոր դավաճան, միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիային: Այդ ավանտյուրիստի մերկացումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ սովետական Հայրենիքի թշնամիները բոլոր հանցավոր պլանները ջախջախվել են և կջախջախվեն՝ հանդիպելով մեր պարտիայի և ժողովրդի մեծ միասնությանը:

Նշալակելով բուրժուական վերասերված Բերիայի հանցավոր գործունեությունը, պլենումը միաժամանակ լուրջ թերություններ բացահայտեց շրջանի պարտիական ու սովետական կազմակերպությունների աշխատանքում:

Կուլբիշե գյուղի, կապի ու Հայտարանի շրջանային գրասենյակների սկզբնական պարտիական կազմակերպություններում հետևողականորեն չի կիրառվում կոլեկտիվ ղեկավարման սկզբունքը: Պարտիայի կոմիտեի կազմակերպությանը և նվիրվել կազմակերպությանը անհամապատասխան աշխատանքները կազմակերպմանը: Պարտիական կազմակերպություններում և տնտեսական աշխատանքում դեռևս լիովին չի ծավալված ինքնազննադատությունն ու ներքինից եկող քննադատությունը:

Միահամուռ հավանություն տալով ՍՍՀՄ Կենտրոնական Կոմիտեի որոշմանը, կոմունիստները, արտահայտելով շրջանի բոլոր աշխատավորների միաձուլ կամքը, պահանջեցին ամենախիստ կերպով պատժել ժողովրդի թշնամի Բերիային: Պլենումը հավաստիացրեց ՍՍՀՄ Կենտրոնական Կոմիտեին, որ շրջանի պարտիական կազմակերպությունները էլ ավելի կարգաբարձրեն իրենց ուսույնը՝ ղեկավարվելով կոլեկտիվ ղեկավարման սկզբունքով, կվերացնեն իրենց աշխատանքում գոյություն ունեցող թերությունները, անձնվիրաբար կպայքարեն պարտիայի 19-րդ համագումարի որոշումների կենսագործման համար:

ԹՇՆԱՄՈՒ ՊՐՈՎՈԿԱՑԻՍՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՆ ԶԱՒՈՂՄԱՆ

Նրանի էլեկտրատեխնիկական գործարանի աշխատողների կոլեկտիվը իր ժողովում հաղորդում լսելով ՍՍՀՄ Կենտրոնի Պլենումի և ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության որոշումների մասին, խորին զոհունակությամբ արձանագրեց, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ժամանակին ու վճռական միջոցներ ձեռք առավ ժողովրդի թշնամի Բերիայի հանցավոր գործողությունները լիկվիդացնելու համար:

Ստալինյան մրցանակի լաուրեատ, գեներատորային ցեխի լարափաթ-

թող բանվոր ընկ. Գալֆայանը իր ելույթում ասաց.

— Պարտիան պատեց իմպերիալիզմի վարձկան Բերիայի դիմակը: Մեր խնդիրն է՝ աշխատել եռապատկված եռանդով և փառս սիրելի Հայրենիքի, լինել զգուն: Մեր ցեխը պարտավորվում է հովիտի պլանը կատարել 110 տոկոսով:

Ամբիոնի մոտ է ինժեներ ընկ. Յու. Սկրիպոյը:

— Ոճրագործ Բերիան,— ասում է նա,— ցանկանում էր քայքայել մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը:

նը, սովետական կարգը, մեր Հայրենիքի հզորությունը: Բայց դավաճանը իր հաշիվներում սխալվեց: Նրա նողկալի գործերը ժողովրդի առջև մերկացված են: Մենք ամեն ինչ կանենք մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրությունը էլ ավելի ամրապնդելու համար:

Միահամուռ կերպով ընդունված բանաձևում գործարանի կոլեկտիվը չեքմ հավանություն տվեց ՍՍՀՄ Կենտրոնի Պլենումի և ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության որոշումներին: